

ՀԱՅԿԱԿԱՆ

Տ Պ Ա Պ Ի Ռ Ի Թ Ե Ն Ա

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԶՔՆԱԻՌՈՒԹԵՆԷՆ ՄԻՆԶ ԱՌ ՄԵԶ

Հայկական Մատենագիտութիւն գրող նոր եւ մեզի կարելի եղածին լափ աւելի ոճով եւ ձոխ թովանդակութեամբ տպագրութեան մը ձեռք գարնելով, ազգային եւ օտար բանասիրաց ոմանց մեզի յայտնած փափաքին համեմատ՝ գրքին սկիզբը հայկական տպագրութեան ընդհանուր պատմութիւնն ուղեցիւնք զնեւ: Հանդիսիս խմբագրութիւնն՝ միտածեց իր էջերուն միջոցով նախապէս զայն ազգին ժամօրացրնելու պատիւն ընել համառօտ երկասիրութեան, որ չունի յիւրեան հոյսերուն մը կամ ուրիշ արդիւնք՝ բայց երբ յայտոյ ու նաեւ մեզմէ՝ այլեւայլ անգամ նոյն նիւթին վրայ հրատարակուածներուն ամբողջութիւնը միանգամայն ներկայացընել ընթերցողաց:

Ունեւն ծանօթ է թէ Խնչպէս տպագրական արուեստին զիւտը՝ մեծ և ընդհանուր յեղափոխութիւն մը ընելու սահմանուած էր մարդկային ազգի քաղաքակրթութեան պատմութեան մէջ, և թէ որչափ երախտապարտ է նմա ուսումնական աշխարհ: Ուստի և զարմանք չէ, թէ Խնչպէս քիչ միջոց ժամանակի բաւական եղած է գրեթէ ընդհանուր ընելու այդ օգտակար գիւտին զործածութիւնը, ոչ միայն Եւրոպայի այլեւայլ աշխարհաց և ազգաց, այլ եւ արեւելեան ժողովրդոց մէջ:

Մեր ազգին նկատմամբ ալ, որչափ քաղաքական դիրքովը թերեւս ոչ այնչափ նախանձելի՝ այդ գիւտին ծանօթացած և ընդհանուր եղած միջոցներուն, անով հանդերձ

քիչ տտեն բաւական եղած է անոր բարեւարար ազդասեաց մասնակցելու: Տպագրութեան զիւտը, Խնչպէս յայտնի է, 1455¹՝ եղած է. իսկ մեր ազգին մէջ՝ ձեռուրնիս եղած վաւերական յիշատակարաններէ պատելով, կը գտնենք որ միայն 57 տարի ետքը եղած է անոր սկզբնաւորութիւնն, և հետեւաբար նաեւ բարգաւաճանքը:

Հետաքննական է մերազգի բանասիրութեան համար գիտելը, թէ Խնչ կերպով, ո՞ր և որո՞ց ձեռքով ու ճարտարահայր ջանասիրութեամբ:

Խնչուան ներկայ դարուս կէսը՝ մեր բանասիրաց մէջ ընդհանուր և ընդունելի կարծիք մ'էր, թէ Միքայէլ կաթողիկոսին կողմանէ զեպանութեամբ յԵւրոպա դրկուած անձ մը, Ուրգար զպիր Եւզակիացի, եղած ըլլայ առաջին՝ տպագրութեան արուեստը մեր ազգին մէջ մտցրնող. կամ զայն օրինաւոր արուեստով ու հայկական տառից վայելուչ ձեւերով մեր մէջ ներկայացընելու պարծանքն ունեցողը: Իր ջանքով ի վենետիկ տպագրուած հայ սաղմոսարան մը, որոյ քանի մը օրինակը հասած են մինչ առ մեզ, իրենց պատմական յիշատակարաններով կը թուէին հաւատարմացնել զայս եւթադրութիւն: Ոչ կարծիքն ունեցողներուն մէջ առաջին է Սամւէլեան Հ. Միքայէլ վարդապետը՝ իր բազմափաստակ Հայոց պատմութեան մէջ, որուն հետեւող երեւցած են և այլք:

Մակայն վերջի տարիներուս մէջ եղած ուսումնական հետաքննութիւնք և հետազո-

տութիւնը և նորանոր յայտնութիւնք՝ առի-
պեցին զբանասէրս փոփոխութիւն մուծանել
այս կարծեաց ընդունելութեան մէջ, և ճանչ-
նալով հանդերձ Աբգարու մեծ արդիւնքը
հայկական տպագրութեան պատմութեան մէջ,
ըսել թէ և յառաջ քան զինքն և իր ժամանակը՝
եղած են զանազան հայ տպագրութիւնք. և
այն ասեմներէ մնացած քանի մը գրքեր,
ամբողջ կամ թերակատար օրինակք, թէպէտ
երբեմն առանց թուականի կամ տեղւոյ տը-
պագրութեան, հասած են մինչեւ առ մեզ,
և խնամով կը պահուին՝ կամ մեր և կամ
ուրիշ ազգային մատենադարանաց մէջ. զորս
ուսումնասիրելով՝ կրնանք ճշգրտօրէն համարուած
տպագրութեան պատմութեան մը համառո-
տութիւնը ընծայել ընթերցողաց:

Առաջի նկատելով Հայոց տպագրութեան
պատմութիւնը ըստ այլեւայլ ժամանակաց և
անձանց՝ որոց ջանքով և զործով ծանօթացեր
է մեր ազգին մէջ, մեզի պատշաճ կ'երեւ-
նայ թէ երեք շրջանի կամ ժամանակաց կըր-
նանք վերածել զայն. և կը գնենք՝

Առաջին շրջան հայկական տպագրութեան,
անոր մեզի ծանօթ սկզբնաւորութենէն մինչև
ցԱբգար եւպոկիացի (1513—1565):

Երկրորդ շրջան, Աբգարու գործունեու-
թեան սկզբնաւորութենէն՝ մինչև անցեալ
դարու սկիզբը (1565—1700):

Երրորդ շրջան, Եօթնդարեան գործունեու-
թեան ի մեր օրերը (1700—1895...):

Պատմական առանձին աղբիւրք կը պակ-
սին մեզ՝ մեր այս զուգնաքանջ երկասիրու-
թիւնն կատարելապէս կերպարանքով ներ-
կայացնելու համար: Բարեբաղդաբար մեր
հին տպագրողք՝ արեւմտեայց՝ իրենց ժամա-
նակակցաց հետեւելով, սովորութիւն ըրած են՝
ինչ որ կ'երեւնայ նաեւ ի գրչագիրս, իրենց
տպագրած գրքերուն մէջ, յաճախազօյն ի
վերջն, յիշատակարաններ գնել, յորոց կը
յայտնուի իրենց քաղաքը, առհմը և տպա-
գրական գործունէութեան պատմութիւնը, Ա-
ստեցմէ քաղելով, և օգտուելով նաեւ այլոց
աշխատասիրութենէն, կազմեցինք այս գը-
րուածքս: Այսպէս սովոր են ընել և հար-
պացի գիտունք. անոնցմէ մէկը՝ Վենետիկոյ
մարկոսեան համբաւեալ գրագրարանին մատե-

նապետ Գաղղիլանի՝ կ'ըսէ, քանի մի տարի
յառաջ հրատարակած իր մէկ երկասիրութեանը
մէջ (La stampa a Venezia). « Տպարա-
նաց պատմութիւնը, բաց ի վաւերականներէ
(եթէ զտուին), նոյն իսկ անոնցմէ հրատա-
րակեալ գրքերէ կը կազմուի. մանաւանդ այն
յիշատակարաններէ որ գրուած են գրեթէ
ամեն հին տպագրութեանց մէջ. որոնք հար-
կաւոր տեղեկութիւններն բովանդակելով՝ իւ-
րաքանչիւր քաղաքաց մէջ հաստատուած տը-
պարաններու պատմութիւն են »:

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

ՀԱՅ ՏԳՄԱՐՈՒԹՅԱՆԸ ԾԱՆԾԻ ՄԱՐԿԱՆԻՆԻՆԻՆԸ

ՄԻՆՁՆԻ ՏԱՐԳԱՐ

(1513—1565)

Հայկական առաջին մասնական տպագիր,
որչափ որ մեզի ծանօթ է, կը ներկայանայ
ի 1472 թուականի հրատարակեալ Բագմա-
լեզոս քերականոյնքեան մը մէջ, Գաղղիա-
կան Դպրոցի (Collège de France) ակա-
դեմիոյ աշխատասիրութեամբ. յորում ի մէջ
այլեւայլ լեզուաց կը յիշուի նաեւ մերն՝ իր
այլուբեհումը, և ճաշակ մը կ'ընծայուի ըն-
թերցողաց քանի մը էջ գրութեամբ: Այս
հրատարակութիւն տեսած չըլլալով, այլ ի լրոյ
եւեթ ծանօթ անոր զոյգութեան և բովանդա-
կութեան, չենք կրնար աւելի տեղեկութիւն
մը տալ, կամ այդ նախաձեռն համարուած
տառից նմանահանութիւն ներկայացնել, որ
անշուշտ հետաքննական և փափաքելի կրնար
ըլլալ բանասիրաց:

Ասկէ քառասուն տարի ետք D. I. Z.
A. տպագրական գրոյմը կրող հաստատու-
թեան մը կը հանդիպինք ի վենետիկ, ուր
1512—1513 թուականներուն հետեւեալ
հայերէն տառիւք գրքերը հրատարակուած
են, յորոց մի կամ երկու օրինակք հասած
ըլլալով առ մեզ վերջին քսանըհինգ տարի-
ներու մէջ, գնենք կարգաւ, նշանակելով

միանգամայն թէ այսօրուան օրս՝ իւր և ուրու չիլ կը գտնուին:

Վ. Պարզատեմար, ապեալ ի 1512, վենետիկ, ապարան D. I. Z. A: Ի Մատենադարանի Մխիթարեանց վիճենայի (2 օր.) և Երուսաղեմի Ս. Յակոբեանց:

Բ. Պատարագատետր. ապեալ 1513, ի նմին քաղաքի և նոյնադրոյմ ապարանի: Ի Մատենադարանի Ս. Յակոբեանց, և Կեսարիոյ առաջնորդ Գեր. Տրգատ վ. Պալեանի:

Գ. Ուրարագիրք, ապեալ ի 1513, դարձեալ ի նմին քաղաքի և նոյնադրոյմ ապարանի: Մի մի օրինակ ի Մատենադարանի վենետիկոյ եւ վիճենայի Մխիթարեանց, Երուսաղեմի Ս. Յակոբեանց և Տ. վ. Պալեանի:

Դ. Տաղարան, ապեալ ի 1513, ի վենետիկ՝ որպէս ի վեր անդ: Երկու օրինակ ի Մատենադարանի Երուսաղեմի Ս. Յակոբեանց, և օրինակ մի առ Տ. վ. Պալեանի:

Ե. Աւրարք. ապեալ ի 1513, ի վենետիկ՝ որպէս ի վեր անդ: Ի Մատենադարանի վենետիկոյ Մխիթարեանց և Կեսարիոյ Ս. Կարապետի վանաց:

Աստիճ եւն ահաւասիկ բանասիրաց ծանօթ ամենահին համարուած ապագրքն, և զրեթէ մի և նոյն տարուան մէջ՝ մէկ ապարանէ մը հրատարակեալը:

Կ'արժէ որ վրանին տրուած ուղոյն տեղեկութիւնները ամփոփենք, ցուցակին մէջ՝ զոր զրինք, նշանակեալ կարգաւ:

*
* *


Բայց նախ քննենք թէ ո՞վ էր այս հայ լիզուով ու տառերով նախնական ապագրութեանց հրատարակիչն, որոյ անշուշտ անունն կամ զործարանին յայտարար սկզբնատառք պէտք է նկատուին եւրոպական այդ շարս տառք, զոր ակնարկեցինք, D. I. Z. A. և որոյ նմանահանութիւնն կը դնենք մեր ընթերցողաց առջևը: Հայ մ'էր արգեօք, եթէ խալապցի ազգաւ:

Հանդէս Ամսօրեայ՝ այս կարևոր հարցման հետեւեալ պատասխանն կու տայ.

« Ի սկզբան անդ ապագրութեան՝ ապա-

րանին կամ ապագրչին անունը յայտնի չէր զրոյմուեր գրքին վրայ, այլ ապագրապետին անունը սկզբնագրերն կը զրոյմուէին այլաբանական ձեւի կամ պատկերի մը մէջ, որ այլևայլ տեսակ էր: Ետքէն կամաց կամաց նոյն ապագրապետին կամ ապարանին տիրոջ կամ նոյն իսկ ապարանին անունը կը զրուէր մատենին յիշատակարանին մէջ, որ հետզհետէ զանազան փոփոխութիւններէ անցնելով՝ ճակատին վրայ փոխադրուեցաւ, որ սովորութիւնը՝ մնաց մինչեւ ցայսօր:

» Այսպիսի վաղեմի ձեւ կամ նշանադրոյմ մ'ունի մեր մատենան ալ: Այս նշանադրոյմը, գրքին վերջին էջին վրայ կարմիր թանաքով ապուած է »:



Թէ վենետիկոյ մէջ Ռուբինեանց ատենէն և շարունակաբար եղած է միշտ՝ պատուով, ընչիւք ու թուով հայ ընտիր քաղթականութիւն մը, արդէն յայտնի է ընթերցածէր ազգայնոց, ընդարձակ և հետաքննական տեղեկութեամբք այլևայլ գրոց մէջ ալ հրատարակուած: Ուստի որչափ ալ անտարակոյս է Հայոց ի վենետիկ բնակութիւն և գործունէութիւն, մանաւանդ վաճառականական նշանակումով, բայց թէ ազգային մ'էր այդ գրոց հրատարակութիւնն ընող տալարանին տէրը, մեզի անհաւանելի և զրեթէ անկարելի կ'երևայ:

Ասոր պատճառը նախ՝ և զխաւորաբար նոյն ատենուան իշխող հասարակապետութեան օրինաց խտութիւնն, որ կարգէ զուրս զգուշաբորութիւն և արթնութիւն սեւեր որ տը պագրչիք երբեք կրօնից և վարչական օրինաց և կարգաց հակառակ հրատարակութիւն մը չկարենան ընել. ուստի և այդ ծանր և զը-

ժողովին գործը անոնց եւեթ կը յանձնէր՝ որ բնիկքն և խալաքիքը բլլան և իր ամեն վտանգութեանն արժանաւորը: Անոնց վրայ ալ մասնաւոր բնիկք և հսկողը սահմանաւած կային, որպէս զի բլլայ թէ իրենց շնորհաւած արտունութեամբը զեղծանին: Հարկ չէ յանելու, թէ այս վտանգութեան արժանի չէին կրնար բլլալ որ ոչ իրենց ազգէն և ոչ լեզուէն էին: Եւ պիտի տեսնենք քիչ ետքը՝ որ երբ Արգար ուզեց քանի մը հայկական գրոց տպագրութիւնն ընել ի վենետիկ, — ինչպէս նաեւ իր յաջորդքն, — որչափ գծաւորութիւնք և խոյնզուտներ ելան առջեւէին և որչափ և որպիսի միջնորդութեանց կարօտ եղան, ինչպէս պիտի ցուցնէ մեզ պատմութեանս կարգը:

Երկրորդ, տպարան մը նոր ի նորոյ հաստատելը, որ եթէ հիմայ ալ կարծուածին չափ դիւրին գործ մը չէ, եւս առաւել այն ժամանակաց համար, յորս արուեստը գեոանկատար վիճակի մէջ, գծաւորութիւնքն ալ բազմապատիկը կ'ըլլային և ծանրագնոյ. և միայն հայերէն քանի մը տպագրութեանց համար որոց ելքն և յաջողութիւն տարակուսական և անստոյգ էր, խոհական ձեռնարի մը չէր այդչափ գծաւորութեանց ենթարկուիլը: Ժամանակ անցնելէն ետքը՝ Գուլնազարեանն և Սահրատեանը ուզեցին փորձ մը ընել, բայց ուրիշ էին ժամանակքն և անձինք, աւելի ծանօթը տեղական վարչութեան իրենց կեանաց պայմանքը կամ ընկերական դրդով և ազդեցութեամբ:

Աս պատճառներէն դուրս՝ քառից ձուլումն, ձե և շարուածը՝ ամենայն ինչ այս հին տպագրութեանց մէջ արուեստագիտի ձեռք և ճարտարութիւն կը յայտնէ:

Ուստի ինչպէս յիշատակարաններէն ալ կը տեսնուի, տպագրել և հրատարակել աւելողը զանազան անձինք էին յազգայնոց մերոց, բայց տպագրիչն իտալացի մը:

* *

Հետեւաբար ո՞վ էր ուրեմն այդ օտարազգին, որոյ գործարանէն ելած էն յիշուող տպագրութիւնքը:

Այս հետաքննելի հարցման պատասխանը

հմտագունից և տեղեկաց յանձնելով, սա միայն ըսենք, որ նոյն ատեն ի վենետիկ քաղաքի տպարանի տէր և տպելու արտունութիւն ունեցող անձանց ցուցակը և գործարանաց նշանադրումը քննելով, որ արդէն հրատարակուած են, չգտնուեցաւ անուն մը՝ այդ սկզբնատառից մերձաւոր կամ համանուն ման կնիք մը: Միայն հռչականուն Ալտոյ Մանուցիոյ տպագրապետի անուն մը կը յիշատակուի, նոյն արուեստով զբաղող Antonio Zaroto անուամբ, որիչ մ'ալ I. Zanandrea Asolano, որոնք գործած են մինչ և 1513 և անդր. երրորդ մ'ալ D. Zuan-Matteo Asola, որոյ 1595ին ըրած տպագրութեան մը յիշատակութեան հանդէպեր ենք հաւանականաբար այս զրոց տպագրիչն, միւս չորրորդ՝ և աւելի Zuan Andrea կոչուած անձ մը: Բայց ինչպէս կանխեցինք ըսել, ստուգադոյն ծանօթութիւնը և տեղեկութիւնը ի բանիբուն հմտից և ձեռնհասից սպասելով՝ անցնինք մեր նիւթին:

* *

Վենետիկ՝ միջին դարուց մէջ բոլանդակ արեւելից և արեւմտից համար վաճառականութեան մեծ շահատան մ'էր. և իր անհման դրիւքն և քաղաքական օրինաց ընձեռած խղաղ հանգարտութեամբն՝ արուեստք և ճարտարութիւնք բարգաւաճ և յառաջողէ մ վիճակի մէջ էին: Հոն կը ծաղկէին արդէն տպագրութեան արուեստին հետ յարնչութիւն ունեցող նմանօրինակ արուեստք, ինչպէս խաղի թղթերու՝ որ խորագրանկ կը փորագրուէին փայտի վրայ: և տախտակագրոյ մ տպագրիչք որ անդային ի հնգետաասաներորդ դարէ կը գործածուէին ի Հոլանդա և ի Գերմանիա, և որոց տպագրական արուեստ տպարանական է իր սկզբնաւորութիւն, վենետիկ մէջ կը շինուէին:

Այս պատճառաւ և մերայինք՝ երբ ուզեցին տպագրութեամբ և տպագրովք օժտել իրենց ազգը, նախամեծար համարեցան ի վենետիկ դիմել քան այլուր. և դիմողներն ալ չկրցան նոյն յաջողութիւնն ունենալ, բայց միայն յԱմսթերամ՝ ուր աւելի աւելական, քաղաւաճ և արդիւնական եղաւ իրենց գործը:

թող որ այնչափ հուշակեալ էին վենետական տպագիրք ընդհանրապէս անդստին ի 1480 տարւոյ, մինչև յատկաբար նշանակել վենետիկեան տառաչք (characteribus venetis) և անով ցուցնել անոնց արուեստական ճարտարութիւնը և ընտրութիւնը. և թէպէտ որ ամեն ինչ «նոյն թուականին ըրած տպագրութեան մը մէջ փափաք կը ցուցնէր որ իր տառերն կարենան մըցիլ մաքրութեամբն և արուեստի վենետական տառից. Dii dent, կ'ըսէր, ut venetos exsuperare queant:

Բազմաթիւ էին տպագրիչք՝ հոն արուեստին գիտէն մինչ ի վախճան հնգետասներորդ դարու, զերթէ երկու հարիւրի ելնելով անոնց թիւը. մինչ նոյն միջոց ժամանակի մէջ 37 եղած են ի Հոռոմ, ի Փլորենտինա 22, ի Բոլոնիա 42, ի Միլան, ի Պարիս և ի Լիոն՝ երեք քաղաքն մէկտեղ առնելով՝ 150, ուր ի վենետիկ տպագրողաց այս զարմանալի համբնթացութեան մէջ՝ ամեն քաղաքակիրթ ազգաց ներկայութիւնը կը գտնենք: Առաւելագոյնքն թուով բնականաբար Գերմանիայէն, յորաց և նախնական գիւտ արուեստին՝ յետոյ գաղղիացիք, փլամանք, հոլանդացիք, զուիցերացիք, սպանիացիք. շատեր յիսպերիոյ, Դալմատիոյ և ի Կանտիոյ, և որոց հետ կու գան կը խառնուին նաև Հայք:

* *

1512-1513ին հրատարակուած նշանակեցիքն՝ մեզի հասած հայկական տպագրութեանց հնագոյնը, որ քանի մը տարի յառաջ զրտնուեցաւ և հիմա կը գտնուի, ինչպէս ըսինք, վիեննայի Միխիթարեանց մատենադարանին մէջ, և է Պարզատումար:

Այս կարեւոր գիտը կը ծանուցանէ նոյն Ուխտին Հանդես ամսօրեայ պատուական թերթը 1889 տարւոյն հոկտեմբերի թուովը հրատարակուած Հայ տպագրութեանց ամենահին երախայրիք հատուածովը, և ստորագրութիւնն և նկարագիրը կը տրուի հետեւեալ կերպով.

« Մատենին դիրքն՝ փոքրազիր ութամալ է, թուահամար չունի: Թերթերը նշանակուած են ա, բ, գ, դ, է, զ, հ, ը տառերով, որոնք զրգին վերջին երեսին վրայ

կարգաւ վերստին նշանակուած են թերթերուն թիւը ցուցնելու համար: Իւրաքանչիւր թերթը նշանակուած է յաջորդ կերպով. ա. — ա. բ. — ա. գ. — ա. դ. — բ. — բ. բ. — բ. գ. — բ. դ. այսինքն ա թերթին առաջին, երկրորդ, երրորդ թուովը և այլն: Ասոր յաջորդող չորս թուովին վերայ բան մը նշանակուած չէ: Ետքէն կու գայ բ թերթն, իրեն յաջորդող բ. բ. — բ. գ. — բ. դ թերթերն, և կը շարունակուի մինչև բ. որմէ կ'երեւնայ թէ գիրքն ութը թերթ է: Սակայն վերջին թերթն ամբողջ չէ, երեք թուով միայն ունի: Եւ այսպէս ամբողջ գիրքն է՝ ի թերթ $\times 8$ թուով $= 56$ թուով, որուն վրայ աւելցուր բ թերթին երեք թուովն ալ, կ'ըլլայ 59 թուով:

« Տպագրութիւնն ըստ բաւականին մաքուր եւ կանոնաւոր է, ունի կարգաւորեալ կիտապրութիւն և գլխագիր: Բառերն իրարմէ բաժնուած են. այնպէս որ կրնայ ըսուիլ թէ առաջիկայ գիրքն՝ իր ժամանակին պարագաներուն նայելով, իր սեռին մէջ ամենակատարեալն է: Տպագրութեան սխալներն ալ նուազ են, ուստի և տպագրութեան գիտութեան ամէն օրէնքները վրան կ'երեւան. և որ ամենէն նշանաւորն է, տպագրութիւնը կրկնագոյն է՝ սեւ և կարմիր: Սակայն ամբողջ գիրքը մէկ տեսակ գրով միայն տպուած է, որ թէպէտ մէկ կողմանէ աղքատութեան նշան է, սակայն մէկալ կողմանէ յայտնի նշան ու ապացոյց է միանգամայն հնութեան, այսինքն ժամանակի մը, երբ այլեւայլ գրեր փորագրել ու ձուլել տալ այնպէս դժուար չէր:

« Եւ ինչպէս որ երեւելի պատկերահան, ներ սովոր են իրենց անունն նկարին տակ գրել, — ինչպէս որ երեւելի գործատանց արտադրութիւնն՝ գործատան սեպհական նշանն կը կրեն, այսպէս նաև մեր տպագրութիւնը, իւր յատուկ նշանն ունի վերջին երեսին վրայ,...

» ... Գիրքը Պարզատումար մըն է Հայոց 961 տարւոյն, և կը պարունակէ Պարզատումարէն զատ՝ Նշանացոյց մը, ուրուն կը յաջորդեն ստորաբաժանեալ մատենք՝ 1. Կիտապնացոյց, 2. Երազացոյց, 3. Խնդրն.

դեան տղայոց և 4. Մարմնատաղաց : Ոչ յառաջարան , ոչ յիշատակարան և ոչ ուրիշ մասնաւոր նշան մը ունի... .

« Մատենին առաջին և գլխաւոր ճակտին մէջ տեղը կայ միայն « Այս է պարզպատումար հայոց » : Իսկ երրորդ երեսն կը սկսի բուն գիրքն այսպէս . » Ինճնադիտար . ոչ վարդապետ , եռանկէն . գիրն նոսն է . և տանուտէրն ի վերեան կարիճն է . եւ այլն կարգաւ երբա... » : Ուստի տօնացոյցը կը սկսի Հայոց 961 = Գր . 1512 թուականին :

« Գրքին վրայ վերոյիշեալ 961 թուականն զատ չկայ թուական մը , որով տպագրութեան տարին կարենայինք ճշիւն օրոյել : Այսու ամենայնիւ զօրաւոր կուտան մըն է այս 961 թուականը , որով կրնանք քանի մը քալլ առնուլ և հետեւութեանց հասնիլ :

« Տօնացոյց կամ տումար մը շինողին առաջին գործին է տարւոյն թիւը գնել , այն տարւոյն թիւը , որուն մէջն է , կամ որուն համար տումարը կը շինուի : Ուստի բոլորովին անհաւանական է թէ մատենագիրն իր . մէ շատ ետքն եկող տարւոյ մը տարեթիւր գնէ իւր գրութեան վրայ : Բայց չունի . նաև պատճառ մը մատենագիրն՝ անցեալ տարւոյ թուականն գնել գրած ու անշուշտ ժողովրդ . դեան գործածութեան համար շինած մատենին՝ մանաւանդ տումարին վրայ , որ նպատակին չէր կրնար ծառայել : Եւ իրօք ինչպէս ներկայ տարւոյն մէջ տպուած տօնացոյցին վրայ , — օրինակի աղաքաւ , դնենք ասկէ 50 տարի յառաջ անցած թուական մը , այն է 1839 , և կամ նոյնչափ տարի ետքը՝ 1939 թուականը :

« Յայտնի է ուրեմն , որ առաջիկայ մատենը տպուած է կամ այն տարին , զոր կը ցուցնէ թուականը , այսինքն՝ 961 = 1512 , և կամ քանի մը ամիս , և գուցէ նոյն իսկ տարի մը յառաջ սկսած է , որպէս զի նշանակուած 961 տարւոյն համար տումարը պատրաստ ու գործածելի ըլլայ :

« Այս կը ցուցնեն տպագրութեան արտաքին որպիսութիւնը , գրեթե մեծութիւնն և տնկութիւնը , վերջապէս այն իրական տարբերութիւնն՝ որ կայ առաջիկայ մատենին և անկէ՝ քիչ մը ետքը տպուած մէկ տումարին կամ խրատադրքին մէջ , որ նոյնպէս վիեննայի Միխիթարեան Մատենադարանն է և Կերայի Տաղարանին տպարանէն եւ լած է » :

Այսչափ Ամսօրեայ հանդես իւր վերոյիշեալ թուոյն մէջ : Քիչ ետքը պիտի տեսնենք թէ ինչպէս պիտի ստուգուի յօդուածագրին ենթագրութիւնը՝ միայն տպագրութեան թուականին նկատմամբ և ոչ տպարանին :

* *

Անմիջապէս այդ գիտին յաջորդ տարւոյն առաջին ամիսներուն Բազմավեպ վենետկոյ Միխիթարեանց խմբագրութիւն , Տօնացոյց աւանահին և միակ ենթագրուած տպագրական գիտին տնտեսանէն առիթ առնելով՝ յօդուած մը կը հրատարակէր , զոր քիչ ետքը պիտի մէջ բերենք , Աղքարք և Ոչքարք գիրք մատենից արդէն իրենց Մատենադարանին մէջ պահուած օրինակներով և նմանահանութեամբը տպագրուցանելով որ ոչ ի Պոլիս կամ պլլուր , այլ թէ Պարզապատմարն և թէ նմանատու երկու տպագիրքն ի վենետիկ եղած են և ժամանակաւ յառաջ քան զԱղքար :

Բայց ասոնց նկարագիրը կամ ստորագրութիւնը չտուած՝ ուրիշ կարեւորագոյն գիտի մը խօսքն ընենք , յերևուողեմեան ազգային պատրիարքարանի մէջ յայտնուած , և է

ԳԱՏԱՐԱԳԱՏՆՏՐ

Գեր . Մահակ եպիսկոպոս Խապայեան Արեւելք լրագրի մէջ կ'աւետէր այս գիտը : Պատարագատետր կամ Խորհրդատետր մ'էր այն , և կը կրէր այս համառօտ յիշատակարանը , կամ գէ՛ն նոյնչափ եւեթ մէջ կը բերուէր զայն ծանօթացընողէն . « Տպագրեցաւ սուրբ տառա ի ԶՀԲ (= 1523-4) ի ստուածապահ քաղաք ի վենետիկ , Ֆրանկաստեան . ձեռամբ մեղապարտ Բակդիս . որք կարգայք՝ մեղաց թոյլութիւն խնդրեցէր :

Բագմավիպ այս գիտին վրայ գրելով (1892, մայիս) կը յաւելուր. « Քաղաքն յայտնուեցաւ, բայց տպագրատունն՝ զեռ ոչ. կրնար կարծուիլ թէ նոյն իսկ Հայոց տան մէջ (զոր արդէն ունէին տպագրիչ մեր ի քաղաքին) ըլլայ, ինչպէս արիւր՝ տպագրեալ հին գիրք մը կ'ըսէ: Այս հայ տպագրութեան կարեւոր խնդրոյն ծանօթութեան մեծ լոյս մ'է, բայց դեռ ոչ բաւական. կը մնայ փափաքելի զրաւեմէն այս մեղապարտ Յակոբէն առաջ բարեւ պարտ և բարեբաղդ հայ տպագրող մի, կամ թէ նոյն իսկ Յակոբէն է՝ իր առաջին տպագրութեան, և ինչ կերպով հնարելը հայկական տառերը, ինչպէս որ իրմէ քառասուն և աւելի տարի վերջ (1565) երբեմն առաջին տպագիր կարծողը Աբգարն թոխաթեցի՝ իր ըրածը կը պատմէ, միանգամայն և յայտնելով կամ կոչելով՝ Նոր իր տպագրութիւնը, ուսկից հարկ էր գուշակել որ իրմէ առաջ ալ կամ հնազոյն հայ տպագրութիւն կար: Այս բանիս վկայութիւն մ'ալ ըլլայ (ինչ որ ցայմ տեղ մը յշուած չէ), Լորէնցոյ տ'Աննիս հեղինակի մը Տիեզերագրոգրաքեան (Cosmografia) գրոց մէջ յիշածը, թէ «ինքն այօք տեսեր է յամին 1562 վեներտիկէն բերուած հայերէն տպագիր, որ՝ ըսածէն կ'երեւի թէ ըլլայ այբբենարան կամ քերական» 1:

* *

Ազգային տպագրութեան նկատմամբ մեծ կարեւորութիւն ունէր այս գիտ. և եթէ բանասիրաց համար աւելի ցանկալի մաս մը թերի մնայով, կատարելապէս զո՛ր չէր ընել գիրենք, կամ օրինակին պակասութենէն կամ ուրիշ ո՛ր և իցէ պատճառաւ, որուած տեղեկութեանց անբաւական ըլլալը կը համարուէր: Բարեբաղդաբար անցեալ տարւոյն մէջ կեսաթիոյ առաջնորդ Գեր. Տրդատ վարդապետ, կատարելագոյն և անթերի օրինակ մը նոյն գրքէն ձեռք կը բերէ իր վիճակին մէջ,

ու լիուլի ամէն հանդամանօքը 1894 տարւոյ Ամարեայ հանդիսի գեկտեմբերի թուոյն մէջ կը ծանուցանէ:

Ահաւասիկ նոյն գրոց նկարագիրը՝ գիտը ընողին բուն փասքերովը, զոր կը քաղենք յիշեալ հանդիսէն:

«... Պէտք է փութով ըսեմ՝ թէ մատենան է Պատարագամատոյց, Ուրբարա գիրք և Տաղարան, միասին կաղմեալ տեսարակոյս ի սկզբանէ:

« Մատենիս՝ բաց ի տախտակեայ կաշէպատ ամենահին կազմի երկու կողքերէն ուրոնք հինցած են, թղթերը զոնթէ մաքուր մնացած են. և ո՛ր և է պակաս ալ չունի: Գիրքն ութածայ է, 17 հարիւրորդամեար երկայն և 11 հարիւրորդամեար բայն: Ամբողջ մատենան միատեսակ, մեծատառ և առեւ գրով ապուած է: Գիրն կը նմանի ճիշդ մեր ձեռքն եղած Աղբարքի:

« Նշանակելի է որ տպագրութիւնն եղած է կրկնագոյն, սեւ և կարմիր մեղանաւ: Կարմիր գոյնն ոչ թէ միայն վերնագիրներու՝ այլ և տեղ տեղ էջերու մէջ ալ տպագրուած է: Տպագրական սխալներն նուազ են, աչքի կը զարնէ և առնոն որ յաճախ և առաի տեղ գործածուած է և փոխադարձաբար: Բառերն թէ և շատ տեղեր իրարմէ անշատուած են, բայց կան երբեմն տեղեր ալ՝ ուր անբաժան մնացած են. այսու ամենայնիւ պէտք է ըսենք՝ թէ իր ժամանակին համեմատ՝ տպագրութիւնն մաքուր և կանոնաւոր եղած է: Ունի կիտաղորութիւն, զլիազիր (մեծաւ մասամբ կարմրաւ), զարդագիր, պատկերներ: Եւ կիսաթորանք միայն վերջի մասի, Տաղարանի մէջ:

« Թերթերն (8 թուղթ 1 թերթ) նշանակուած են ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. տառերով, որք վերջի մասի վերջին երեսի վրայ վերասին տպագրուած են: Իւրաքանչիւր թերթն նշանակուած է ճիշդ այնպէս ինչպէս Պարզատօմարն, զոր ծանօթացոյց մեզ յարգելի Հ. Գ. Գովրիկեան (Հանդիս ամսօրեայ 1889 թիւ 10): Առաջին թերթն՝ ա. — ա. — բ. — ա. — գ. — ա. — դ. այսպէս նշանակուած, չորս թուղթերու յաջորդող միւս չորս թուղթերուն վրայ բան մը նշանակուած

1. Il cui alfabeto costa, siccome io ho veduto con una breve metodo del loro idioma, di 29 lettere, di che già ne hanno la stampa, avendo la riportata da Venetia l'anno del sessantadue.

չէ. ապա կու գայ երկրորդ թերթն. ք. — ք. ք. — ք. ք. — ք. ք. նոյնպէս յաջորդ չորս թղթերուն վրայ բան մը նշանակուած չիկայ. ետքէն կու գայ երկրորդ թերթն. ք. — ք. ա. — ք. ք. — այսպէս յաջորդաբար նշանակուած մինչեւ վեցերորդ թերթն, վերջին ք թերթն միայն չորս թուղթ ունի, և այս մասն ամբողջ 44 թուղթ է: Ճիշդ առաջին մասի նման և գրութեամբ՝ կը շարունակուին երկրորդ և երրորդ մասերն » (որոց վրայ մենք առանձին պիտի խօսինք)...:

« Երեք մասին թղթերն մօրինակ են, հաստ, անողորկ և շաքարազոյն, և նոյն իսկ փոքր տարբերութիւն մը չունին: Ամբողջ մատենին իւրաքանչիւր էջն կը բաղկանայ 16 տողերէ. տող մըն ալ, կրնանք ըսել, վերի լուսանցքի թղթածնէ զարդի մը մէջ եղած կարմրագոյն վերնագիրն: Այս ձեւ զարդն ունի նաեւ Աղբարքը:

« Տպագրութիւնն ունի իր յատուկ նշանադրոյն մատենին մէջ երկու տեղ, և յիշատակարան մը համառօտ՝ առաջին մասի վերջն, զորս ի ստորեւ յտռոյ պիտի բերենք: և անոնցմէ կը հասկնանք թէ տպագրութիւնն եղած է անտարակոյց ի վերնետիկ և ի ս. պարահի D. I. Z. A. h:

« Պատարագամատոյց գրող առաջին թղթի առաջին երեսին վրայ, մէջ տեղը, տպուած է կարմրաւ.

Պատարագա
տետը է առ

Թիսուսի Քրիստոսի Աստուծոյ

« Երկրորդ երեսը պատկեր մը, յունածնէ զգեստաւորեալ քահանայ մը՝ սկիւի ի ձեռին, շրջապատուած է հինգ զպիւր կամ օտրկաւազներով: Քահանային երկու կողմն երկու պատկերներ եւս կան փոքրագիր, և երկու աշտանակներ վառուած մոմերով: Պատկերի վերի մասին մէջ եռանկիւնաձեւ մը շինուած է, որուն մէջ խաչելութեան պատկեր մը կայ կիսովին:

« Երկրորդ թղթէն կը սկսի մատենան. Թործամ կամենցի Քահանայ

ն պատարագ մատուցանել:
Պարտէ այսպէս զգեստաւորիլ
. (կարմրաւ)

Որ զգեցեալ ես զլոյս ո
բպէս հանդերձ տէր մե
ր յիսուս. քրիստոս. անճառելի իս
ա. ք.

« Այսպէս կը շարունակուի մինչեւ 44 թղթի առաջին երեսը, ուր կը վերջանայ հետեւեալ յիշատակարանաւ, ինչպէս վերն ըսինք.

Գրեցաւ սուրբ տառս ի. Չ. կր.
ի աստուած
ապահ քաղաքս ի վէնէօ որ է
վէնէ

տիկ ֆռանկստեան. ձեռամբ մէ
ղապարտ յակոբին. ոյ որ կարողայ
ք մեղաց թողութիւն խնդեցէք
աստուծոյ:

44-ը թղթի երկրորդ երեսն դատարկ մնացած է:

« Այժմեայ ընդհանրապէս գործածուած Պատարագամատուցի և ասոր մէջ, բաւական տարբերութիւններ կը նշմարուին...

« Յիշատակարանին մէջ յիշուած Յակոբն ոյ է, և ի՛նչ կը նշանակէ ջկբ = 1513 թուականն: Երնանք ըսել թէ տպագրութեան թուականն է, և Յակոբն ալ մեծ դեր ունեցած է տպագրական գործին մէջ. բայց թէ տարակուսանաց կէտ մը կայ, այն՝ ալ գրեցաւ բառն է, փոխանակ տպեցաւ սոչքր տառս, և այլն՝ ըսելու. արդեօք ձեռագրի գրչութեան թուականն է, որ տպագրութեան ժամանակ ալ անփոփոխ թողուած է: Ինչ որ ալ լինի, թերեւ ալ սխալինք, մեր տըկար կարծիքն է՝ նա մանաւանդ համոզումն, թէ մատենան տպուած է ի վերնետիկ, և տպագրութեան թուականն է 1513, կամ առ առաւելն՝ մէկ տարի վերջ »:

Այսչափ Գեր. Պալեան վարդապետ, և իր վերջին ենթադրութիւնն կամ կարծիք՝ ստոյգ, ինչպէս պիտի տեսնենք:

(Շարայարեւի)

